ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ՀՀ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա - Գ. Նժդեհի փողոց խաչմերուկի շենքերի գեղարվեստական լուսավորության լրամշակման սույն նախագծի համար հիմք են ծառայել՝

- Տեղանքի հատակագիծը
- Տեղազննման արդյունքները

Նախատեսվում է ք. Երևան Արշակունյաց պողոտա - Գ. Նժդեհի փողոց խաչմերուկի շենքերի գոյություն ունեցող գեղարվեստական լուսավորության ցանցի լրամշակում: Նախագիծն իրականացվել է ՇՆուԿ 23-05-95 -ի («Բնական և էլեկտրական լուսավորություն») շենքերի և շինությունների արտաքին ճարտարապետական լուսավորության պահանջներին համապատասխան, հաշվի առնելով հրապարակի շենքերի ճակատային ճարտարապետա-շինարարական լուծումները: Նախատեսվում է ճարտարապետական լուսավորությունն իրականացնել 120°, 60°, 30°, 25°, 15° և 8° ցրման անկյուն ունեցող, 4, 5, 6 և 10 Վտ հզորության և 3000°-6000° Կ ջերմաստիճանին համապատասխան գույնի լուսադիոդային լամպեր ունեցող պատին ամրացվող լուսատուների միջոցով: էլեկտրասնուցման ցանցի լարանցումն իրականացվում ВВГ 2x0.5 ք.մմ տիպի, մակնիշի և կտրվածքի պղնձե մալուխներով: էլեկտրասնուցումն իրականացվում է գոյություն ունեցող ցանցից:

էլեկտրամոնտաժային աշխատանքներն անհրաժեշտ է կատարել էՏԿ-ի, ՇՆուԿ 3.05.06-85-ի և գործող այլ հրահանգների նորմերի պահանջներով:

ՎԿԱՅԱԿՈՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հ/Հ	ՆՇԱՆԱԿՈՒՄԸ	Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ	ԾԱՆՈԹ.
	1	2	3
1	էՏԿ	էլեկտրասարքավորումների տեղակայման կանոններ	VII հրատարակություն
2	СНиП 3.05.06 - 85	էլեկտրատեխնիկական սարքավորումներ	Նախագծային նորմեր
3	СНиП ||-4-79	Բնական և էլեկտրական լուսավորություն	Նախագծային նորմեր